



ՅՈՒՆԻԲԱՆԿ



ԲԱՆԿ ԵՎ ԱՎԵԼԻՆ

2026

ՅՈՒՆԻԲԱՆԿ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Բաժնետոմսի տեսակը

Ճավալը

Բաժնետոմսերի քանակը

Տեղաբաշխման արժեքը

Ձեռքբերման նվազագույն ծավալը

Շուկա ստեղծողը

Ցուցակումը
- Սովորական բաժնետոմս

3.9 մլրդ ՀՀ դրամ

10,000,000 հատ


390 ՀՀ դրամ

1,014,000 ՀՀ դրամ

ՌՈԶ Կապիտալ ԲԲԸ

Հայաստանի ֆոնդային բորսա

Բաժնետոմսերի գնի աճի դինամիկան



	2023	2024	2025
Զուտ Շահույթ	4,454,198,000	8,227,910,000	9,827,973,000
Վճարված շահաբաժին	4,100,000,000	7,777,340,000	9,325,724,971
Սովորական բաժնետոմսերի քանակ	181,254,472	191,254,472	191,254,472
Մեկ բաժնետոմսի շահաբաժին	22.62	40.66	48.76
Շահաբաժնի բաշխման գործակից	7.54%	10.70%	12.7%

ՅՈՒՆԻԲԱՆԿ. ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ◆ **Սովորական բաժնետոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում**
 - բաժնետոմսերից ստացվող շահութաբաժիններից
 - բաժնետոմսերի վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (իրացված կապիտալի հավելած)
- ◆ **Գրավիչ շահութաբաժնային եկամտաբերություն՝** միջինում 10–12% տարեկան դիվիդենդներ (վերջին 3 տարվա ընթացքում)՝ զգալիորեն ավելի բարձր, քան տեղական ավանդների տոկոսադրույթները:
- ◆ **Իրացվելիություն.** Բանկի սովորական բաժնետոմսերը շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX)՝ ապահովելով ներդրողների համար դրանց ազատ շրջանառությունը:
Բաժնետոմսերի հանրությանը պատկանող բաժնեմասը (Free Float) կազմում է 10.7%:
- ◆ **Հարկային արտոնություն**
AMX-ում ցուցակված բաժնետոմսերից ստացված եկամուտները ազատված են հարկումից, ինչն ավելի գրավիչ է դարձնում տվյալ գործիքը:
- ◆ **Բաժնետոմսերի վաճառք ցանկացած պահին բրոքերի միջոցով.**
2015 թվականին Յունիբանկը ՌՌԶ Կապիտալ ԲԲԸ-ի հետ կնքել է սովորական բաժնետոմսերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագիր, որի շրջանակներում ՌՌԶ կապիտալը իրականացնում է բանկի բաժնետոմսերի գնանշումներ Հայաստանի ֆոնդային բորսայում:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

◆ **Ստանալ տարեկան շահութաբաժիններ Ժողովի սահմանած կարգով**

Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս իր սեփականատիրոջը տրամադրում է Բանկի կողմից վճարվող շահութաբաժին ստանալու իրավունք՝ իրեն պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Բանկի շահութաբաժնային քաղաքականությամբ նախատեսված է նախորդ տարվա զուտ շահույթի առնվազն 25%-ի չափով շահութաբաժինների վճարման նպատակային մակարդակ՝ համապատասխան ֆինանսական պայմանների առկայության դեպքում:

◆ **Ձայնի իրավունք**

Սովորական բաժնետոմսի սեփականատերերն իրավունք ունեն մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ իրենց պատկանող սովորական բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված դեպքերում: Բանկի մեկ սովորական բաժնետոմսը տվյալ բաժնետոմսի սեփականատիրոջը տալիս է Ժողովում մեկ ձայնի իրավունք:

◆ **Հետգնման պահանջի իրավունք**

Սովորական բաժնետոմսի սեփականատերերն իրավունք ունեն Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

◆ **Մնացած գույքից բաժնեմաս ստանալու իրավունք Բանկի լուծարման դեպքում**

Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված հերթականությամբ համապատասխան՝ Բանկի այլ պարտավորությունների մարումից հետո:

◆ **Այլ իրավունքներ**

Օրենսդրությամբ տրամադրված այլ լիազորություններ

ՅՈՒՆԻԲԱՆԿ. ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նպատակային խումբը	1. Բանկի սովորական բաժնետոմսերի գործող բաժնետերեր 2. Բանկի Բ և Գ դասի հաստատագրված տարեկան շահույթաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի գործող բաժնետերեր 3. Բանկի լրացուցիչ թողարկման շրջանակում սովորական բաժնետոմսեր ձեռք բերած անձինք
Ծավալը	9 մլրդ ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	900,000 հատ
Պարտատոմսի անվանական արժեք	10,000 ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամտաբերությունը	36 ամիս՝ 13.25% , հետագայում՝ լողացող
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	Կիսամյակային
Ձեռքբերման սահմանափակումները	- Ներդրողներն իրավունք ունեն ձեռք բերելու անժամկետ պարտատոմսեր՝ յուրաքանչյուր 2,600 հատ բաժնետոմսի հաշվով առավելագույնը 300 հատ անժամկետ պարտատոմս հարաբերակցությամբ: - 2,600 հատը գերազանցող բաժնետոմսերի առկայության դեպքում անժամկետ պարտատոմսերի ձեռքբերման առավելագույն քանակն ավելանում է նույն համամասնությամբ՝ յուրաքանչյուր լրացուցիչ 8 հատ բաժնետոմսի հաշվով ներդրողը կարող է ձեռք բերել առավելագույնը 1 հատ անժամկետ պարտատոմս: - Ձեռքբերման նվազագույնը ծավալը՝ 1,000,000 ՀՀ դրամ

ՅՈՒՆԻԲԱՆԿ. ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ◆ **Գրավիչ եկամտաբերություն՝ զգալիորեն բարձր ավանդների միջին եկամտաբերության համեմատ**
Շրջանառության առաջին 36 ամիսների համար կիրառվելու է *տարեկան արժեկտրոնային ֆիքսված տոկոսադրույք*,
- Տարեկան **13.25%**,
- ◆ **Տոկոսադրույքի վերանայում՝ շուկայական միտումների հետ համընթաց**
- Շրջանառության առաջին 36 ամիսների ավարտից հետո կիրառվելու է *տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք*,
- Վերանայումը յուրաքանչյուր կիսամյակ՝ հիմնվելով Benchmark տոկոսադրույքի վրա,
- Յուրաքանչյուր ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրը հաշվարկված տոկոսադրույքը կիրառարակվի Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում (www.unibank.am)՝ Եական փաստեր և տեղեկություններ պարունակող հաշվետվության տեսքով:
- ◆ **Benchmark և սպրեդ**
- **Benchmark.** ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
- **Սպրեդ.** + 6 %
- ◆ **Երկարաժամկետ ներդրումային գործիք**
Հարմար է այն ներդրողների համար, ովքեր նախընտրում են կանխատեսելի և կայուն եկամտային հոսքեր՝ առանց հաճախակի վերաներդրումների կամ կապիտալի շարժի անհրաժեշտության:
- ◆ **Կանոնավոր եկամուտ**
Ներդրողները ստանում են պարբերական տոկոսագումարներ, որոնք կարող են ծառայել որպես վստահելի եկամտի աղբյուր
- ◆ **Հարկային արտոնություն**
AMX-ում ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատված են հարկերից մինչև 2027թ. դեկտեմբերի 31-ը:
- ◆ **Խնայողությունների դիվերսիֆիկացիա**
- ◆ **Պարտատոմսերի վաճառք ցանկացած պահին բրոքերի միջոցով**

ՅՈՒՆԻԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Moody's վարկանիշ | 2026թ հունիս
B1, Կանխատեսումը - կայուն (stable)

Վստահություն՝ Հայաստանի բանկային
ծառայություններից օգտվող բնակչության ավելի
քան 30%-ի կողմից

Բիզնեսի հիմնական շարժիչ ուժեր. Վարկային քարտեր, POS ֆինանսավորում, Միկրո և ՓՄՁ վարկավորում, Լիզինգային
ծառայություններ

Հիմնական ցանց. +50 մասնաճյուղեր, +400 վաճառքի կետեր, +350.000 հաճախորդ

Գործառնական ուժեղ կողմեր. UBPay դրամական փոխանցումների հայաստանյան վճարահաշվարկային համակարգ,
Unibank Invest առևտրային (trading) հարթակ, UNIMobile և UNIBusiness Mobile բջջային հավելվածներ՝ նախատեսված
ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Կապիտալի շուկայի ակտիվ մասնակից. AMX-ում ցուցակված պարտատոմսերի ծավալը՝ 120 մլն ԱՄՆ դոլար, ՀՀ առաջին
անժամկետ պարտատոմսեր՝ 26 մլն ԱՄՆ դոլար, Բանկի IPO-ից ի վեր ավելի քան 70 մլն ԱՄՆ դոլարի կապիտալի
ներգրավում:

Առաջարկի մանրամասն պայմանների համար այցելեք www.unibank.am կայք կամ դիմեք Բանկի մասնաճյուղ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ
ՀԵՌ: +374 10 59 22 36 (301)
ԷԼ. ՀԱՍՑԵ: margarita.hambardzumyan@unibank.am

www.unibank.am
www.corp.unibank.am
www.prive.unibank.am